Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/5 ՀՀ Սյունիքի մարզի գ. Բռնակոթի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան	17.01.2024թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ռ. Եղիազարյան Աշ. Բալայան Տ. Կոմիտասյան Դ. Շատվերյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հ. Գինովյանը

1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ

Համաձայն հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի պահանջի՝ մասնակիցը հայտով ներկայացնում է.
- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, որը ներկայացվում է **excel** տարբերակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ ներկայացվել է **PDF** տարբերակով,
- իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների նկարագրերը, որը ներկայացվում է **word** տարբերակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ ներկայացվել է **PDF** տարբերակով:

Ծավալաթերթ-նախահաշիվ

Մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով հրապարակված ծավալաթերթից տարբերվող ծավալարաթերթ, մասնավորապես՝

- Լրացված ծավալաթերթում բացակայում են սահմանված նվազագույն և առավելագույն կշիռների միջակայքը (7-11-րդ սյունակները),
- Միավոր արժեքները լրացված են 1000 դրամներով:

Հավելված 1.2.Սարքերի և սարքավորումների հավելված

- 1-4-րդ, 8-10-րդ տողերով 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված կայքում հնարավոր չէ գտնել 8-րդ (Մոդել) սյունակով ներկայացված մոդելները: Ավելին՝ ներկայացված մոդելները առհասարակ չեն գտնվել համացանցում, ուստի հնարավոր չէ գնահատել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:
- 5-7-րդ տողերով 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված կայքում կան միայն պոմպեր, իսկ հրավերով պահանջվում են ջրային օդատաքացուցիչներ:
- 11-12-րդ տողերով 8-րդ (Մոդել) սյունակով ներկայացված մոդելները 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում,*

հերթական համար) սյունակում ներկայացված կայքում հնարավոր չէ գտնել: Ավելին՝ ներկայացված մոդելները առհասարակ չեն գտնվել համացանցում, ուստի հնարավոր չէ գնահատել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:

- 13-րդ տողով 8-րդ (Մոդել) սյունակով ներկայացված մոդելը 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված կայքում հնարավոր չէ գտնել: Ավելին՝ ներկայացված մոդելները առհասարակ չեն գտնվել համացանցում, ուստի հնարավոր չէ գնահատել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:
- 14-րդ տողով 8-րդ (Մոդել) սյունակով ներկայացված մոդելը 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված կայքում հնարավոր չէ գտնել: Ավելին՝ ներկայացված մոդելները առհասարակ չեն գտնվել համացանցում, ուստի հնարավոր չէ գնահատել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:
- 15-18-րդ տողերով 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված german-pumps.com կայք չի գտնվել: Բացի այդ 8-րդ (Մոդել) սյունակով ներկայացված մոդելները առհասարակ չեն գտնվել համացանցում, ուստի հնարավոր չէ գնահատել դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին
- 19-րդ ներկայացված 9-րդ (*առաջարկվող սարքավորման վերաբերյալ հիմնավորումներ /համացանցից հղում կամ հայտին կցվող ֆայլի անվանում, հերթական համար)* սյունակում ներկայացված կայքում նշված մոդելը չի հայտնաբերվել: Բացի այդ վերոնշյալ մոդելը չի հանդիսանում գազադիզվառելիքային այրիչ, այլ հանդիսանում է միայն բենզինով աշխատող գեներատոր, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին:

<u>«ՀԻԴՐՈ» ՍՊԸ և «Արհովշին» ՍՊԸ կոնսորցիում</u>

Հավելված 2

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի, հրավերի 8.2-րդ և 8.7-րդ կետերի պահանջները, մասնակցի հայտը մերժվում է:

Հայտով ներկայացված մյուս փաստաթղթերը չեն գնահատվում:

1.2 Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 18.01.2024թ ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում՝ այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/5** ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի, հրավերի 8.2-րդ և 8.7-րդ կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 19.01.2024թ. ժամը 15:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ -0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Միրզոյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Աշ. Բալայան

_____ Տ. Կոմիտասյան

_____ Դ. Շատվերյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան